Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9 փետրվարի 2026 թվական ք. Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ Հովսեփ Բեդևյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գոռ Հակոբյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, նիստում ուսումնասիրելով թիվ ՎԴ1/0795/05/24 գործի ենթակայությունը և ընդդատությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու վերաբերյալ ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2026 թվականի հունվարի 19-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. Ն.Հ. 2024 թվականի հոկտեմբերի 18-ին հայցադիմում է ներկայացրել (փոստին է հանձնել) ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության և ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ առողջապահության նախարարի՝ 24.07.2024 թվականի թիվ 4031-Ա հրամանը և, որպես հետևանք՝ ՀՀ պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության 11.07.2024 թվականի թիվ 2827/ԶԿՎ գրությունն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Ն.Հ. 2025 թվականի մարտի 20-ին ՀՀ վարչական դատարան է մուտքագրել միջնորդություն՝ հայցի առարկան փոփոխելու և ավելացնելու մասին, որով

ներկայացվել են հետևյալ պահանջները. «*Ոչ իրավաչափ ճանաչել 24.07.2024 թվականի թիվ 4031-Ա հրամանը՝ առողջապահության նախարարի 08.02.2024 թվականի «2024 թվականի ամառային և ձմեռային զորակոչերի շրջանակներում նախազորակոչային և զորակոչային տարիքի քաղաքացիների բժշկական զննում իրականացնող զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներին կից բժշկական հանձնաժողովների կազմը հաստատելու մասին» թիվ 703-Ա հրամանի հավելվածի 11-րդ կետի 3-րդ այնպակի 3-րդ տողում «Ն. Հարությունյան» բառը փոխարինված «Գ. Գրիգորյան» բառով.*

Որպես հետևանք վերացնել ՀՀ պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության կողմից 11.07.2024 թվականի 2827/ՀԿՎ տրված գրությունը.

Հայցվորին վերականգնել ՀՀ Սյունիքի մարզի տարածքային ստորաբաժանման բժշկական հանձնաժողովում որպես բժիշկ մասնագետ.

Պատասխանողից բռնագանձել աշխատանքից անհիմն ու անօրինական ազատումից մինչև վերականգնումն ընկած ժամանակահատվածի համար իրավասու մարմնին դրամական փոխհատուցում՝ օրենսդրությամբ սահմանված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների չափով (հարկադիր պարապուրդ)»:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2025 թվականի դեկտեմբերի 11-ի որոշմամբ գործը վերահասցեագրվել է ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

3. ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2026 թվականի հունվարի 19-ի որոշմամբ գործի ենթակայությունը և ընդդատությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարան:

4. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2026 թվականի հունվարի 29-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Հղում կատարելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածին, 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածին (նախկինում գործող խմբագրությամբ), 81-րդ հոդվածին, ՀՀ քաղաքացիական դատավարության

օրենսգրքի 18-րդ հոդվածին, 202-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին, 210-րդ հոդվածի 1-ին մասին, «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի մայիսի 2-ի թիվ ՀՕ-220-Ն օրենքի 1-ին հոդվածին, 37-րդ հոդվածի 2-րդ մասին, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածին, ՀՀ Կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 16-րդ կետին, նույն որոշմամբ հաստատված հավելված 3-ի 1-7-րդ կետերին՝ ՀՀ վարչական դատարանը 2025 թվականի դեկտեմբերի 11-ի որոշմամբ գործը վերահասցեագրել է ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) Ասվածի համատեքստում Դատարանն արձանագրում է, որ բժշկական հանձնաժողովներում ընդգրկված մասնագետների կողմից իրականացվում է ՀՀ կառավարության թիվ 405-Ն որոշմամբ նրանց վրա դրված պարտականությունները, որպիսի գործունեության դիմաց նույն որոշմամբ սահմանված է փոխհատուցման կարգ, որն իր մեջ ներառում է նաև համապատասխան հանձնաժողովում ընդգրկված անձանց վարձատրություն: Այսինքն՝ հանձնաժողովի անդամները իրականացնում են հանձնաժողովի վրա դրված պարտականությունները և համապատասխան վարձատրություն են ստանում դրա դիմաց:*

(…) Դատարանն արձանագրում է, որ զինվորական կոմիսարիատի բժշկական հանձնաժողովի ձևավորման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանը հանդիսանում է անհատական իրավական ակտ, որով որոշակի ծառայություններ մատուցելու համար հանձնաժողովի անդամներից ձևավորվում է զինվորական կոմիսարիատի բժշկական հանձնաժողովը:

Դատարանի գնահատմամբ այդ իրավահարաբերությունները կրում են աշխատանքային բնույթ՝ համապատասխանում են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 13-րդ հոդվածով սահմանված աշխատանքային հարաբերությունների ձևակերպմանը, (…):

Դատարանի համոզմամբ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանով աշխատանքային հարաբերություններ են ձևավորվում հանձնաժողովում ընդգրկված անձանց հետ, որպիսի

իրավահարաբերություններում հանձնաժողովում իրականացվող գործունեության դիմաց վերջիններս վարձատրվում են ՀՀ կառավարության թիվ 405-Ն որոշման 3-րդ հավելվածով սահմանված կարգով:

(...) Դատարանի համոզմամբ զինվորական կոմիսարիատի բժշկական հանձնաժողովի անդամը չի կարող համարվել հանրային ծառայող:

Ամբողջ ասվածի հիման վրա Դատարանը եզրահանգում է, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանով աշխատանքային հարաբերություններ են ձևավորվում զինվորական կոմիսարիատի բժշկական հանձնաժողովում ընդգրկված անձանց հետ, որպիսի աշխատանքը չի կարող որակվել որպես հանրային ծառայություն, ըստ այդմ՝ զինվորական կոմիսարիատի բժշկական հանձնաժողովի անդամը հանրային ծառայող չէ (...):

Սույն գործի մինչդատական նախապատմությունից հետևում է, որ ՀՀ առողջապահության նախարարի 08.02.2024 թվականի թիվ 703-Ա հրամանով հաստատվել է 2024 թվականի ամառային և ձմեռային զորակոչերի շրջանակներում նախազորակոչային և զորակոչային տարիքի քաղաքացիների բժշկական զննում իրականացնող զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներին կից բժշկական հանձնաժողովների կազմը, որում ներառված է եղել նաև սույն գործով հայցվոր [Ն.Հ.], իսկ ՀՀ առողջապահության նախարարի 24.07.2024 թվականի թիվ 4031-Ա հրամանով փոփոխություն է կատարվել ՀՀ առողջապահության նախարարի 08.02.2024 թվականի թիվ 703-Ա հրամանում՝ հրամանի 11-րդ կետի 3-րդ այունակի 3-րդ տողում «Ն. Հարությունյան» բառը փոխարինվել է «Գ. Գրիգորյան» բառով:

Դատարանը փաստում է նաև, որ հայցվորի կողմից վիճարկվում է ՀՀ առողջապահության նախարարի անհատական իրավական ակտը՝ 24.07.2024 թվականի թիվ 4031-Ա հրամանը, որով փաստացի փոփոխություն է կատարվել ՀՀ առողջապահության նախարարի 08.02.2024 թվականի թիվ 703-Ա հրամանում և հայցվորի հետ ծագած աշխատանքային հարաբերությունները դադարել են:

Դատարանը եզրահանգում է, որ սույն գործը ընդդատյա է ընդհանուր իրավասության դատարանին, քանզի վեճն իր բնույթով աշխատանքային է, առաջացել է անհատական իրավական ակտի փոփոխման արդյունքում, իսկ քննարկվող աշխատանքային հարաբերությունները չեն վերաբերում հանրային

կամ այլընտրանքային ծառայության անցնելուն, այն իրականացնելուն, ծառայությունից ազատելուն (…)»[1]:

6. Հղում կատարելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, 81-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածին, «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի մայիսի 2-ի ՀՕ-220-Ն օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասին, «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքում լրացում կատարելու մասին» 2024 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ՀՕ-490-Ն օրենքին, ՀՀ Կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի «Քաղաքացու առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության, հետազոտման և փորձաքննության ուղեգրման կարգերը, հետազոտում և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները և դրանց գործունեության կարգը, փորձաքննության եզրակացությունների ձևերը, բժշկական հետազոտությունների և բժշկական հաստատությունների ցանկերը, իրականացված ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 405-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 14-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերին՝ ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2026 թվականի հունվարի 19-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարան՝ նշելով հետևյալը. *«(…) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ուժը կորցնելու հանգամանքը չէր կարող հիմք հանդիսանալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման, այն է՝ գործը վերահասցեագրելու համար, քանի որ վերը նշված օրենսդրական փոփոխությունները հստակ սահմանել են գործի քննությունը շարունակելու ՀՀ վարչական դատարանի պարտականությունը:*

[1] Տե՛ս դատական գործը, հատոր 2-րդ, թերթեր 47-55:

Բացի այդ, անհրաժեշտ եմ համարում նշել, որ համաձայն չեմ ՀՀ վարչական դատարանի՝ վիճելի իրավահարաբերությունը որպես աշխատանքային որակելու հետևությունների հետ, քանի որ Որոշման պատճառաբանական մասում վերլուծված նորմերից նման եզրահանգման գալ հնարավոր չէ, առավել ևս, որ հայցի հիմքում հայցվորը վկայակոչել է պատասխանող պետական մարմինների կողմից «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթների խախտումներ: Ավելին, գտնում եմ, հենց Որոշման մեջ վկայակոչված՝ (...) ՀՀ կառավարության 12.04.2018 թվականի թիվ 405-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 14-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերն ուղղակիորեն սահմանում են, որ զինապարտների բժշկական փորձաքննություն իրականացնող մարմիններն են զինվորական կոմիսարիատների բժշկական հանձնաժողովները և կենտրոնական բժշկական հանձնաժողովը, որոնք արտահատիքային են: Միևնույն ժամանակ, հանձնաժողովի անդամի և որևէ մարմնի միջև աշխատանքային իրավահարաբերություններ չեն առաջանում:

Բացի այդ, հարկ եմ համարում նշել, որ ըստ իս, վիճելի իրավահարաբերությունը վերաբերում է ոչ թե հայցվորի և որևէ պետական մարմնի՝ տվյալ դեպքում ՀՀ առողջապահության նախարարության միջև ձևավորված իրավահարաբերություններին, այլ ՀՀ ԱՆ-ի կողմից համապատասխան բժշկական հանձնաժողով ձևավորելու, դրա կազմը փոփոխելու գործառույթի իրացման իրավաչափությանը, ինչը բխում է նշված մարմնի գործառույթներից և ներկայացված պահանջը վերաբերում է հենց այդ գործառույթի ոչ իրավաչափ իրացնելուն, ինչը վարչական իրավահարաբերություն է:

Վերոգրյալ պատճառաբանությամբ գտնում եմ, որ գործը ենթակա է քննության ՀՀ վարչական դատարանում (...)»[2]:

Միաժամանակ, նույն որոշմամբ, ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն արձանագրել է հետևյալը. «*(...) Անդրադառնալով փարածքային ընդդատության հարցին, հարկ եմ համարում նշել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում բնակության վերջին հայտնի*

[2] Տե՛ս դատական գործը, հատոր 2-րդ, թերթեր 62-66:

վայրի առաջին ատյանի դատարան, եթե այլ բան սահմանված չէ սույն օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Տվյալ դեպքում, եթե ՀՀ վարչական դատարանի հետևությունը՝ վիճելի իրավահարաբերությունը աշխատանքային լինելու և գործը ընդհանուր իրավասության դատարանների քննությանը ենթակա լինելու վերաբերյալ հիմք ընդունվի, ապա հաշվի առնելով, որ հայցը ներկայացվել է ՀՀ առողջապահության նախարարության դեմ, որի գտնվելու վայրի հասցեն Սյունիքի մարզում չէ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նման պահանջներով այլ ընդդատության կանոններ սահմանված չեն, ապա գործն ըստ տարածքային ընդդատության կանոնների չպետք է վերահասցեագրվեր Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (…)»[3]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը</u>.

7. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավոր է արդյո՞ք ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ1/0795/05/24 գործն ըստ Ն.Հ. հայցի ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության և ՀՀ պաշտպանության նախարարության՝ հետևյալ պահանջների մասին «Ոչ իրավաչափ ճանաչել 24.07.2024 թվականի թիվ 4031-Ա հրամանը՝ առողջապահության նախարարի 08.02.2024 թվականի «2024 թվականի ամառային և ձմեռային զորակոչերի շրջանակներում նախազորակոչային և զորակոչային տարիքի քաղաքացիների բժշկական զննում իրականացնող զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներին կից բժշկական հանձնաժողովների կազմը հաստատելու մասին» թիվ 703-Ա հրամանի հավելվածի 11-րդ կետի 3-րդ այնպակի 3-րդ տողում «Ն. Հարությունյան» բառը փոխարինված «Գ. Գրիգորյան» բառով.*

Որպես հետևանք վերացնել ՀՀ պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության կողմից 11.07.2024 թվականի 2827/ՁԿՎ տրված գրությունը.

Հայցվորին վերականգնել ՀՀ Սյունիքի մարզի տարածքային ստորաբաժանման բժշկական հանձնաժողովում որպես բժիշկ մասնագետ.

---

[3] Տե՛ս դատական գործը, հատոր 2-րդ, թերթեր 62-66:

Պատասխանողից բռնագանձել աշխատանքից անհիմն ու անօրինական ազատումից մինչև վերականգնումն ընկած ժամանակահատվածի համար իրավասու մարմնին դրամական փոխհատուցում՝ օրենսդրությամբ սահմանված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների չափով (հարկադիր պարապուրդ)», ենթակա չէ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

8. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝*

1) վարչական դատարանը. (...)»:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի»:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝

«1. Դատարանը տարածքային ընդդատության կանոնների պահպանմամբ իր վարույթ ընդունած գործը պետք է քննի ըստ էության, թեկուզև այն հետագայում դարձել է ընդդատյա այլ դատարանի:

2. Դատարանը գործը հանձնում է այլ դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն վարույթ է ընդունվել սույն օրենսգրքի 24-րդ կամ 138-րդ հոդվածով սահմանված կանոնների խախտմամբ:

(...)

4. Սույն օրենսգրքի 21-րդ կամ 22-րդ հոդվածով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործը հանձնվում է այլ դատարանի քննությանը, եթե պատասխանողը մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելն առարկում է գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ:

5. Գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին կայացվում է որոշում»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Գործն ըստ տարածքային ընդդատության կամ սնանկության դատարանից ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը:*

2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:

(...)

6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահները գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, որն իրավազոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում: Որոշմանը կողմ քվեարկած դատավորների կազմից և նրանց կողմից որոշված դատավորը կազմում է որոշման նախագիծը:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

10. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով գործի ենթակայությունը սահմանելու մասին որոշում կայացվելու դեպքում չի կարող վերաքննիչ բողոք բերվել սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի հիմքով այն պատճառաբանությամբ, որ գործը ենթակա չի եղել քննության քաղաքացիական դատավարության կարգով»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի՝ մինչև 2025 թվականի հունվարի 1-ը գործող խմբագրությամբ 1-ին կետի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, ներառյալ՝ հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը»:*

2024 թվականի մայիսի 2-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-220-Ն ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ *«2013 թվականի դեկտեմբերի 5-ի Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի (...) 10-րդ հոդվածում 1-ին մասի 1-ին կետն ուժը կորցրած ճանաչել»:*

Նույն օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «*Սույն օրենքի 1-ին և 35-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2025 թվականի հունվարի 1-ից: Մինչև սույն մասով նախատեսված հոդվածներն ուժի մեջ մտնելը Օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 220-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա ներկայացված հայցադիմումները, որոնք վարույթ են ընդունվել վարչական դատարանի կողմից,*

շարունակում են քննվել վարչական դատարանում, իսկ 220-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա ներկայացված հայցադիմումները քննվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 31-րդ գլխով նախատեսված կանոններով»:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Հանրային ծառայությունը հանրային իշխանության մարմիններին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը և հանրային պաշտոնները:*

2. Պետական ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական մարմիններին վերապահված լիազորությունների իրականացմանը:

3. Պետական ծառայությունն ընդգրկում է քաղաքացիական ծառայությունը, դիվանագիտական ծառայությունը, մաքսային ծառայությունը, հարկային ծառայությունը, փրկարար ծառայությունը, զինվորական ծառայությունը (բացառությամբ օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության զորակոչի միջոցով իրականացվող շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության), ազգային անվտանգության մարմիններում ծառայությունը, ոստիկանությունում ծառայությունը, հակակոռուպցիոն կոմիտեում ծառայությունը, արտաքին հետախուզության ծառայությունում ծառայությունը, քրեակատարողական ծառայությունը, պրոբացիայի ծառայությունը, հարկադիր կատարման ծառայությունը, դատական կարգադրիչների ծառայությունը, էկոպարեկային ծառայությունը, տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայությունը:

4. Համայնքային ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենքներով և համապատասխան ավագանու որոշումներով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունների իրականացմանը:

5. Հանրային ծառայության պաշտոնն արժանիքահեն, կարիերային առաջընթացով բնութագրվող, քաղաքական չեզոքություն, քաղաքական զսպվածություն և մասնագիտական գործունեություն պահանջող հաստիքային

միավոր է, որը նախատեսված է պետական ծառայության առանձին տեսակների համար նախատեսված պաշտոնների անվանացանկով կամ համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկով:

6. Հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող կամ օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական կամ համայնքային ծառայության կադրերի համապատասխան ռեզերվում գտնվող անձը համարվում է հանրային ծառայող:

7. Հանրային ծառայության յուրաքանչյուր պաշտոն ունի անվանում, որը հնարավորին չափ ճշգրիտ արտացոլում է տվյալ պաշտոնի հիմնական գործառույթները և չի կրում ընդհանրական բնույթ»:

«Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Սույն օրենքի իմաստով այլընտրանքային է համարվում ժամկետային պարտադիր զինվորական ծառայությանը փոխարինող ծառայությունը, որը կապված չէ զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ ու իրականացվում է ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական հիմնարկներում*»:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Քաղաքացու առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության, հետազոտման և փորձաքննության ուղեգրման կարգերը, հետազոտում և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները և դրանց գործունեության կարգը, բժշկական հետազոտությունների և բժշկական հաստատությունների ցանկերը, իրականացված ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգը, փորձաքննության եզրակացությունների ձևերը, հիվանդությունների ցանկը, որոնց առկայության դեպքում որոշվում է քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը զինվորական ծառայության համար, ինչպես նաև զինվորական ծառայության պայմանները, որոնք հակացուցված են քաղաքացու կամ զինծառայողի առողջական վիճակին, սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը*»:

ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի «Քաղաքացու առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության, հետազոտման և փորձաքննության ուղեգրման կարգերը, հետազոտում և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները և դրանց գործունեության կարգը,

փորձաքննության եզրակացությունների ձևերը, բժշկական հետազոտությունների և բժշկական հաստատությունների ցանկերը, իրականացված ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 405-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 14-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ «*14. Զինապարտների բժշկական փորձաքննություն իրականացնող մարմիններն են՝*

1) զինվորական կոմիսարիատների բժշկական հանձնաժողովները (արտահաստիքային).»

Նույն հավելվածի 16-րդ կետի համաձայն՝ «*Զինվորական կոմիսարիատի բժշկական հանձնաժողովը, համապատասխան զինվորական կոմիսարի առաջարկությամբ և մարզպետի (Երևանի քաղաքապետի) ներկայացմամբ, կազմավորվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանով՝ մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 5-ը և գործում է ողջ տարվա ընթացքում: Նույն կարգով է իրականացվում հանձնաժողովի կազմում անդամի փոփոխությունը: ԶԿԲՀ-ի կազմում ընդգրկվում են զինվորական կոմիսարիատի բժիշկը (նախագահ), անդամները՝ թերապևտ, սրտաբան, վիրաբույժ, վնասվածքաբան, նյարդաբան, հոգեբույժ, ակնաբույժ, քիթ-կոկորդ-ականջաբան, մաշկաբան, ինչպես նաև հանձնաժողովի քարտուղարը, ընդ որում՝ զինվորական կոմիսարիատի բժշկի պաշտոնը թափուր լինելու դեպքում սույն կետով սահմանված կարգով հանձնաժողովի նախագահ է նշանակվում հանձնաժողովի անդամ հանդիսացող բժիշկ-մասնագետներից մեկը, որը պատասխանատու է հանձնաժողովի աշխատանքների կազմակերպման համար: ԶԿԲՀ-ի աշխատանքներն արձանագրվում են մատյանում, որի լրացման համար պատասխանատու է հանձնաժողովի քարտուղարը: (...)*»:

Նույն որոշմամբ հաստատված հավելված 3-ի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ «*2. Համապատասխան բժշկական հանձնաժողովներում ընդգրկված մասնագետների կողմից նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց բժշկական հաշվառման, առողջական վիճակի գնահատման, բժշկական հետազոտման անցկացման դիմաց առողջապահական կազմակերպություններին փոխհատուցելու և բժշկական հանձնաժողովներում ընդգրկված մասնագետների վարձատրության նպատակով պետական պատվեր տեղադրող մարմին*

առողջապահական կազմակերպությունների հետ կնքում է համապատասխան պայմանագրեր:

3. Համապատասխան բժշկական հանձնաժողովներում ընդգրկված մասնագետների կողմից նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց բժշկական հաշվառման, առողջական վիճակի գնահատման դիմաց առողջապահական կազմակերպություններին փոխհատուցումն ու բժշկական հանձնաժողովներում ընդգրկված մասնագետների վարձատրությունը կատարվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով տվյալ տարվա համար այդ նպատակով նախատեսված գումարների սահմաններում՝ տարեկան 11 ամսվա կտրվածքով»:

9. Նախորդ կետում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ, օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

Հարկ է նշել, որ մինչև 2025 թվականի հունվարի 1-ը ՀՀ վարչական դատարանի ենթակայությանը վերապահված էին նաև հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը: Մինչդեռ, 2025 թվականի հունվարի 1-ից օրենսդիրը նշված գործերի քննությունը վերապահել է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների քննությանը՝ ՀՀ վարչական դատարանի քննությանը թողնելով միայն մինչև 2025 թվականի հունվարի 1-ը նշված վեճերով ներկայացված հայցադիմումները, որոնք արդեն իսկ վարույթ են ընդունվել վարչական դատարանի կողմից:

Այսինքն՝ 2025 թվականի հունվարի 1-ից հետո ՀՀ վարչական դատարանն իրավասու է քննելու հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված միայն այն վեճերը, որոնց վերաբերյալ ներկայացված հայցադիմումները ՀՀ վարչական դատարանը վարույթ է ընդունել մինչև 2025 թվականի հունվարի 1-ը:

Հարկ է ընդգծել, որ վեճը ՀՀ վարչական դատարանի ենթակայությանը վերապահված լինելու հանգամանքը գնահատելիս՝ էական է, որ վեճը բխի հանրային իրավահարաբերություններից, կամ մինչև 2025 թվականի հունվարի 1-ը վարույթ ընդունած գործով կոնկրետ պաշտոնը (աշխատանքը) համապատասխանի օրենքով հանրային ծառայության (պետական ծառայություն, համայնքային ծառայություն, հանրային պաշտոն) կամ այլընտրանքային ծառայության (ժամկետային պարտադիր զինվորական ծառայությանը փոխարինող ծառայություն) համար տրված նկարագրին:

10. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Ն.Հ. 2024 թվականի հոկտեմբերի 18-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության և ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ առողջապահության նախարարի՝ 24.07.2024 թվականի թիվ 4031-Ա հրամանը և, որպես հետևանք՝ ՀՀ պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության 11.07.2024 թվականի թիվ 2827/ԶԿՎ գրությունն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Ն.Հ. 2025 թվականի մարտի 20-ին ՀՀ վարչական դատարան է մուտքագրել միջնորդություն՝ հայցի առարկան փոփոխելու և ավելացնելու մասին, որով ներկայացվել է հետևյալ պահանջները. *«Ոչ իրավաչափ ճանաչել 24.07.2024 թվականի թիվ 4031-Ա հրամանը՝ առողջապահության նախարարի 08.02.2024 թվականի «2024 թվականի ամառային և ձմեռային զորակոչերի շրջանակներում նախազորակոչային և զորակոչային տարիքի քաղաքացիների բժշկական զննում իրականացնող զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներին կից բժշկական հանձնաժողովների կազմը հաստատելու մասին» թիվ 703-Ա հրամանի հավելվածի 11-րդ կետի 3-րդ այնակի 3-րդ տողում «Ն. Հարությունյան» բառը փոխարինված «Գ. Գրիգորյան» բառով.*

Որպես հետևանք վերացնել ՀՀ պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության կողմից 11.07.2024 թվականի 2827/ՀԿՎ տրված գրությունը.

Հայցվորին վերականգնել ՀՀ Սյունիքի մարզի տարածքային ստորաբաժանման բժշկական հանձնաժողովում որպես բժիշկ մասնագետ.

Պատասխանողից բռնագանձել աշխատանքից անհիմն ու անօրինական ազատումից մինչև վերականգնումն ընկած ժամանակահատվածի համար իրավասու մարմնին դրամական փոխհատուցում՝ օրենսդրությամբ սահմանված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների չափով (հարկադիր պարապուրդ)»[4],

- գործը ՀՀ վարչական դատարանի՝ 2025 թվականի դեկտեմբերի 11-ի որոշմամբ վերահասցեագրվել է ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ վեճի առարկա իրավահարաբերությունները կրում են աշխատանքային բնույթ՝ համապատասխանում են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 13-րդ հոդվածով սահմանված աշխատանքային հարաբերությունների ձևակերպմանը, և զինվորական կոմիսարիատի բժշկական հանձնաժողովի անդամը չի կարող համարվել հանրային ծառայող[5],

- ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2026 թվականի հունվարի 19-ի որոշմամբ գտել է, որ վիճելի իրավահարաբերությունը վերաբերում է ոչ թե հայցվորի և որևէ պետական մարմնի՝ տվյալ դեպքում ՀՀ առողջապահության նախարարության միջև ձևավորված իրավահարաբերություններին, այլ ՀՀ առողջապահության նախարարության կողմից համապատասխան բժշկական հանձնաժողով ձևավորելու, դրա կազմը փոփոխելու գործառույթի իրացման իրավաչափությանը, ինչը բխում է նշված մարմնի գործառույթներից և ներկայացված պահանջը վերաբերում է հենց այդ գործառույթի ոչ իրավաչափ իրացնելուն, ինչը վարչական իրավահարաբերություն է[6]:

---

[4] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:
[5] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[6] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

11. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-9-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է նշել, որ հայցադիմումի առարկան կազմող հիմնական պահանջը վերաբերում է ՀՀ առողջապահության նախարարի՝ 2024 թվականի հուլիսի 24-ի թիվ 4031-Ա հրամանը՝ «Ն. Հարությունյան» բառը «Գ. Գրիգորյան» բառով փոխարինելու մասով ոչ իրավաչափ ճանաչելուն: Նշված հրամանով Ն.Հ. հանվել է 2024 թվականի ամառային և ձմեռային զորակոչերի շրջանակներում նախազորակոչային և զորակոչային տարիքի քաղաքացիների բժշկական զննում իրականացնող զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներին կից բժշկական հանձնաժողովի արտահաստիքային պաշտոնից:

Սույն պարագայում, հարկ է նշել, որ ՀՀ Կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 14-րդ կետի 1-ին ենթակետի բովանդակությունից ակնհայտ է, որ զինվորական կոմիսարիատների բժշկական հանձնաժողովները կազմված են արտահաստիքային անդամներից (աշխատողներից կամ պաշտոնատար անձանցից), նույն հավելվածի 16-րդ կետը սահմանում է այդ անձանց (նախագահ, անդամներ՝ թերապևտ, սրտաբան, վիրաբույժ, վնասվածքաբան, նյարդաբան, հոգեբույժ, ակնաբույժ, քիթ-կոկորդ-ականջաբան, մաշկաբան և հանձնաժողովի քարտուղար) պաշտոնի նշանակելու՝ հանձնաժողովը կազմավորելու ընթացակարգը: Ընդ որում, ՀՀ Կառավարության՝ 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշմամբ հաստատված հավելված 3-ով, ի թիվս այլնի, սահմանվում է զինվորական կոմիսարիատների բժշկական հանձնաժողովների անդամների վարձատրության կարգը: Միաժամանակ, զինվորական կոմիսարիատների բժշկական հանձնաժողովների արտահաստիքային անդամի պաշտոնը (աշխատանքը) չի համապատասխանի օրենքով հանրային ծառայության կամ այլընտրանքային ծառայության համար տրված նկարագրին, քանի որ չի ներառվում պետական ծառայության, համայնքային ծառայության, կամ հանրային պաշտոնների մեջ, ինչպես նաև չի հանդիսանում ժամկետային պարտադիր զինվորական ծառայությանը փոխարինող ծառայություն:

Նշվածից հետևում է, որ սույն գործով կողմերի միջև ծագած վեճն ուղղակիորեն վերաբերում է մասնավոր իրավահարաբերություններին, քանզի վեճի առարկան

առնչվում է հանրային կամ այլընտրանքային ծառայության պաշտոն չհամարվող պաշտոնից (աշխատանքից) հայցվորին ազատելուն: Հետևաբար վեճը պետք է քննության առնվի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից՝ որպես հանրային կամ այլընտրանքային ծառայության պաշտոն չհամարվող պաշտոնից (աշխատանքից) ազատելու հետ կապված վեճ:

12. Վերոգրյալից հետևում է, որ ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ1/0795/05/24 գործն ըստ Ն.Հ. հայցի ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության և ՀՀ պաշտպանության նախարարության՝ հետևյալ պահանջների մասին «*Ոչ իրավաչափ ճանաչել 24.07.2024 թվականի թիվ 4031-Ա հրամանը՝ առողջապահության նախարարի 08.02.2024 թվականի «2024 թվականի ամառային և ձմեռային զորակոչերի շրջանակներում նախազորակոչային և զորակոչային տարիքի քաղաքացիների բժշկական զննում իրականացնող զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներին կից բժշկական հանձնաժողովների կազմը հաստատելու մասին» թիվ 703-Ա հրամանի հավելվածի 11-րդ կետի 3-րդ այնակի 3-րդ տողում «Ն. Հարությունյան» բառը փոխարինված «Գ. Գրիգորյան» բառով.*

Որպես հետևանք վերացնել ՀՀ պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության կողմից 11.07.2024 թվականի 2827/ԶԿՎ տրված գրությունը.

Հայցվորին վերականգնել ՀՀ Սյունիքի մարզի տարածքային ստորաբաժանման բժշկական հանձնաժողովում որպես բժիշկ մասնագետ.

Պատասխանողից բռնագանձել աշխատանքից անհիմն ու անօրինական ազատումից մինչև վերականգնումն ընկած ժամանակահատվածի համար իրավասու մարմնին դրամական փոխհատուցում՝ օրենսդրությամբ սահմանված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների չափով (հարկադիր պարապուրդ)», ենթակա չէ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր չէ:

Ուստի, Ն.Հ. հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՎԴ1/0795/05/24 գործը ենթակա է առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի քննությանը:

Միաժամանակ հարկ է նշել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով գործի տարածքային ընդդատության վերաբերյալ վեճ առկա է այն դեպքում, երբ գործն ըստ տարածքային ընդդատության ստացած դատարանը համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը: Ընդ որում, գործի տարածքային ընդդատության վերաբերյալ վեճի լուծումը վերապահված է Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատին:

Վերոգրյալի հաշվառմամբ հարկ է փաստել, որ սույն դեպքում գործի տարածքային ընդդատության վերաբերյալ իրավական վեճ դատարանների միջև առկա չէ:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

թիվ ՎԴ1/0795/05/24 գործն ըստ Ն.Հ. հայցի ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության և ՀՀ պաշտպանության նախարարության՝ հետևյալ պահանջների մասին *«Ոչ իրավաչափ ճանաչել 24.07.2024 թվականի թիվ 4031-Ա հրամանը՝ առողջապահության նախարարի 08.02.2024 թվականի «2024 թվականի ամառային և ձմեռային զորակոչերի շրջանակներում նախազորակոչային և զորակոչային տարիքի քաղաքացիների բժշկական զննում իրականացնող զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներին կից բժշկական հանձնաժողովների կազմը հաստատելու մասին» թիվ 703-Ա հրամանի հավելվածի 11-րդ կետի 3-րդ այնպակի 3-րդ տողում «Ն. Հարությունյան» բառը փոխարինված «Գ. Գրիգորյան» բառով.*

Որպես հետևանք վերացնել ՀՀ պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության կողմից 11.07.2024 թվականի 2827/ՋԿՎ տրված գրությունը.

Հայցվորին վերականգնել ՀՀ Այնիքի մարզի տարածքային ստորաբաժանման բժշկական հանձնաժողովում որպես բժիշկ մասնագետ.

Պատասխանողից բռնագանձել աշխատանքից անհիմն ու անօրինական ազատումից մինչև վերականգնումն ընկած ժամանակահատվածի համար

իրավասու մարմնին դրամական փոխհատուցում՝ օրենսդրությամբ սահմանված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների չափով (հարկադիր պարապուրդ)» ենթակա է ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀՈՎՍԵՓ ԲԵԴԵՎՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ